2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արաքսյա Մարգարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 180-Ա)*

ԼՍԵՑԻՆ

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԱԾԱՌԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՆԱԿԱՆ ՍՈՃՈՒ ՃՅՈՒՂԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ՄՈՆՏԱԺՄԱՆ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆԴՐԱՆԻԿ ՉԱԴՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակում տեղադրվող ամանորյա տոնածառի մոնտաժման և ապամոնտաժման, ինչպես նաև բնական սոճու ճյուղերի ձեռքբերման, տեղափոխման, մոնտաժման և ապամոնտաժման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 3-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հատկացնել 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակում տեղադրվող տոնածառի մոնտաժման և ապամոնտաժման, ինչպես նաև սոճու բնական ճյուղերի ձեռքբերման, տեղափոխման, մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքների իրականացման համար:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման՝ (4239) «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» և (4269) «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածներից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -24 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ

Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱՋԱՐՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 181-Ա)*

ԼՍԵՑԻՆ

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի **ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի կողմից իրականացվելիք ամանորյա միջոցառումների կազմակերպման և անցկացման համար հատկացնել 5 000 000 (հինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ - գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) «Այլ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 182-Ա)*

Հարցի քվեարկությունից հետո ելույթ ունեցավ ավագանու անդամ Էդգար Բաղդասարյանը՝ քաղաքի օրվան նվիրված փոնակատարության վերաբերյալ: Նա նաև ներկայացրեց Իտալիայի քաղաքներից մեկի առաջարկը՝ քույր-քաղաք դառնալու վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ

20.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՆԿԱՐԻՉ, ԱՆՎԱՆԻ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՍԱՄՎԵԼ ԳԱՐԵԳԻՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի N 96-Լ որոշման 1-ին կետով ընդունված հավելվածի 280-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված «Հայաստանի նկարիչների միություն» հասարակական կազմակերպության նախագահ Սուրեն Սաֆարյանի միջնորդագիրը (համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի սեպտեմբերի 22-ին 16874 թվագրմամբ)՝ Սամվել Գարեգինի Պետրոսյանին 75-ամյա հոբելյանի կապակցությամբ Գյումրի քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի ստեղծագործական գործունեության, կերպարվեստի և քանդակագործության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և վաստակի համար Հայաստանի Հանրապետության վաստակավոր նկարիչ Սամվել Գարեգինի Պետրոսյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Գարեգինի Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -28 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 183-Ա)*

Քվեարկությունից հետո իր շնորհակալական խոսքով ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության վաստակավոր նկարիչ Սամվել Գարեգինի Պետրոսյանը:
Ավագանու անդամ Էդգար Բաղդասարյանն առաջարկեց Շիրակացու արձանի գրանիտե պատվանդանին զետեղել նրա անունը:

ԼՍԵՑԻՆ

21. ԹՎՈՎ ՀԻՆԳ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒՇԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով որոշման հավելվածում նշված դիմումատուների՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն թվով հինգ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների գույքահարկի տույժերի վճարումների նկատմամբ, ազատելով գույքահարկի տույժերի վճարումից՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարցի շուրջ տեղի ունեցավ քննարկում և որոշվեց նմանատիպ նախագծերի քննարկմնա ժամանակ հրավիրել դիմումատուներին՝ տրանսպորտային միջոցների վերապերյալ տեղեկատվություն ներկայացնելու համար:

Ավագանու անդամ Անժելա Մաթոսյանի կողմից հարց բարձրացվեց նախագծի հավելվածում նշված մի քանի դիմումատուների տույժերը զիջելու վերաբերյալ: Քննարկման արդյունքում ավագանու անդամ Ռուբեն Մխիթարյանի կողմից առաջարկվեց հաջորդիվ դիմումատուներին հրավիրել համապատասխան հանձնաժողովի նիստերին՝ մեքենաների փաստացի վիճակին ծանոթանալու նպատակով:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -11

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 184-Ա)*

ԼՍԵՑԻՆ

22. «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին է դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Արտուշ Հովհաննիսյանը՝ «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ կազմակերպություն) (հարկ վճարողի հաշվառման համարը՝ 05502958, գրանցման հասցեն՝ քաղաք Գյումրի, Շիրակացի փողոց 201) 2010 թվականի հուլիսի 19-ին անշարժ գույքի վարձակալության պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող քաղաք Գյումրի Շիրակացի փողոց թիվ 201 հասցեում գտնվող շենքի վարձակալության վճարի 2026 թվականի հոկտեմբերի 14-ի դրությամբ առկա տույժերի և 2022 թվականի մարտի 10-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 14-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին կազմակերպության տնօրեն Խաչիկ Գալստյանի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 05-ին հասցեագրված թիվ 91

գրությունը (հիմք՝ կազմակերպության թիվ 91 գրությունը):

Գյումրի համայնքի ավագանին 2022 թվականի մարտի 10-ին ընդունել էր N 37-Ա որոշումը՝ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի N 37-Ա որոշումը) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Շիրակացի 201 հասցեում գտնվող շենքը անհատույց օգտագործման իրավունքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրելու վերաբերյալ: Կազմակերպությունը հիմք ընդունելով նշված որոշումը՝ չի կատարել վարձավճարների վճարումները և պատրաստակամություն է հայտնել վճարելու 2022 թվականի մարտի 10-ի դրությամբ առկա գույքի վարձակալության վճարի մայր գումարը, որը կազմում է 1.111.689 (մեկ միլիոն հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր ութսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ, քանի որ սպասարկում է համայնքի շուրջ 14200 (տասնչորս հազար երկու հարյուր) բնակչի և չունի բավարար ֆինանսական միջոցներ կուտակված վարձավճարի վճարման համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի N 37-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի և կազմակերպության տնօրենի գրությունները (համանքապետարանում մուտքագրված 2026 թվականի հոկտեմբերի 06-ին N 17858 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1.Սահմանել արտոնություն «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալությամբ տրամադրված գույքի վարձակալության 2026 թվականի հոկտեմբերի 14-ի դրությամբ առկա տույժերի 2.192.619 (երկու միլիոն հարյուր իննսուներկու հազար վեց հարյուր տասնինը) Հայաստանի Հանրապետության դրամ և 2022 թվականի մարտի 10-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 14-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների 1.839.726 (մեկ միլիոն ութ հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր քսանվեց) Հայաստանի Հանրապետության դրամ գումարների վճարումների նկատմամբ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրեն Խաչիկ Գալստյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 185-Ա)*

ԼՍԵՑԻՆ

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ Հ.ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 23 ՇԵՆՔ 4/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐ ՔԱՋԻԿ ԱՐՄԵՆԱԿ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ԵՎ ՆԱՐԵԿ ԱՐՄԵՆԱԿ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 28-ի 2512-Ա որոշմամբ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հ.Ղանդիլյան փողոց 1 նրբանցք 23 շենք №4/1 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարվել է Արմենակ Ստեփանի Այվազյանին, Քաջիկ Արմենակ Այվազյանին, Նարեկ Արմենակ Այվազյանին որպես ընդհանուր բաժնային սեփականություն: Արմենակ Ստեփանի Այվազյանը մահացել է 2025 թվականի հոկտեմբերի 25-ին: Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 1-ի 1644-Ա որոշմամբ Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 28-ի 2512-Ա որոշման մեջ տեղի է ունեցել փոփոխություն՝ հանվել է Արմենակ Ստեփանի Այվազյան անվանումը: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի №145-Ա որոշմամբ՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հ.Ղանդիլյան փողոց 1 նրբանցք 23 շենք №4/1 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Արմենակ Ստեփանի Այվազյանի անչափահաս երեխաներին՝ Քաջիկ Արմենակ Այվազյանին՝ ծնված 2015թվականի սեպտեմբերի 9-ին, Նարեկ Արմենակ Այվազյանին՝ ծնված 2013 թվականի հունիսի 9-ին, որպես ընդհանուր բաժնային սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 186-Ա)*

Նախքան Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալի ժ/պ Հովիկ Ղազարյանի զեկույցը ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Շավարշ Արամյանի կողմից առաջարկվեց քաղաքաշինական հարցերին վերաբերող նախագծերին քվեարկել առանց զեկուցման:

Ավագանու անդամների կողմից կայացվեց արձանագրային որոշում. ***24-29-րդ նախագծերին քվեարկել մեկ ընդհանրական քվեարկությամբ:***

ԼՍԵՑԻՆ

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով 2023 թվականի սեպտեմբերի 28-ի Հայաստանի Հանրապետության կառավարության N 1667-Ն որոշմամբ սահմանված կարգի 7-րդ, 8-րդ կետերը, 36-րդ կետի 3-րդ ենթակետը և հաշվի առնելով «էքվիլիբրիում» և «Ա.Գ.ԷՍԹԵՅԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից տրամադրված 2026 թվականի ապրիլին, 2026 թվականի հոկտեմբերի 02-ին հողամասերի գնահատման հաշվետվությունները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել՝ էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով և սահմանել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Եթե էլեկտրոնային աճուրդը չի կայանում, ապա հավելվածում նշված հողամասերի օտարման դեպքում, երկրորդ էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանվում է սկզբնական մեկնարկային գնի 85 տոկոսի չափով, չվաճառվելու դեպքում՝ երրորդ և հաջորդ հերթական էլեկտրոնային աճուրդի օտարման ժամանակ մեկնարկային գինը սահմանվում է սկզբնական մեկնարկային գնի 70 տոկոսի չափով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 187-Ա)*

ԼՍԵՑԻՆ

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ, 34-րդ, և 35-րդ կետերի պահանջները, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օտարվող հողամասերը չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում և որոշման հավելվածում նշված դիմումատուների Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք-շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 188-Ա)*

ԼՍԵՑԻՆ

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 154-Ա ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 25-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին պատկանող հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 154-Ա որոշմամբ հաստատված հավելված 1-ինի 4-րդ կետի 2-րդ սյունակի «Լաուրա Էմինի Գրիգորյան» բառերը փոխարինել «Էմիլի Արտակի Գյոլեցյան» բառերով, հավելված 2-րդի 1-ին կետի 8-րդ սյունակի «1025657» թիվը փոխարինել «2964347» թվով:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հանրային բնակելի ֆոնդի տների պահպանման ու սպասարկման համար զբաղեցված հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 25-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 3-րդ սյունակի «Վանիկ Գրիգորյաններ» բառերը փոխարինել «Գրիգորյան» բառով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱՋԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 189-Ա)*

ԼՍԵՑԻՆ

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 132-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 5-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 16-ի «Ազատամարտիկ Մարտուն Պոտրոսյանի գերեզմանը կառուցելու նպատակով դրամական միջոցներ հատկացնելու մասին» N 132-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 190-Ա)*

ԼՍԵՑԻՆ

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ 1992-1995 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետի «ը» պարբերությունով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Չադրյանի համայնքի ղեկավարին ուղղված 2026 թվականի հոկտեմբերի 08-ի զեկուցագիրը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Շիրակ գերեզմանատան՝ 1992-1995 թվականների Արցախյան պատերազմի ժամանակ զոհված ազատամարտիկների զինվորական պանթեոնի ամբողջականացման համար հատկացնել 5 072 682 (հինգ միլիոն յոթանասուներկու հազար վեց հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/2/7 գործառական դասակարգման՝ (5112) «Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 191-Ա)*

ԼՍԵՑԻՆ

29. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐՏԱՇԵՍ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՅԿՈՒՀԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 26 ՀԱՍՑԵԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ, ԱՆՓՈՓՈԽ ԳԾԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱԽԿԻՆ ՉԱՓԱԳՐՈՒՅԱՆ ՄԵՋ ՏԵՂ ԳՏԱԾ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 26,26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ)

Գյումրի քաղաքի Թամանյան փողոց N 26 հասցեի հասարակական նշանակության շինության զբաղեցրած հողամասը սեփականության իրավունքով (հիմք՝ ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20122021-08-0065վկայական) պատկանում է քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանին և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանին: Ներկայացվել է նոր չափագրություն ըստ որի

Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱՋԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 192-Ա)*

ԼՍԵՑԻՆ

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՀՐԱՉԻԿ ՇԻՐԱԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՐԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի դատախազության 2026 հունիսի 17-ի թիվ 64/862-26 և 2026 թվականի սեպտեմբերի 01-ի թիվ 64/2585-26 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2012 թվականի սեպտեմբերի 21-ի թիվ 3157-Ա որոշումը անվավեր ճանաչելու և

նախկին վկայականում եղած և ներկա չափագրությունով ներկայացված հողամասի կողմնային չափերը նույնն են, սակայն նախկին վկայականում հողամասի մակերեսը թվաբանական սխալի պատճառով սխալ է հաշվարկվել, որի պատճառով առաջացել է 26,26(քսանվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերոսով տարբերություն : Քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանի և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանի լիազորված անձ Արթուր Ստեփանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ Թամանյան փողոց N 26 հասցեի նշված շինության տարածքում թվաբանական սխալի պատճառով առաջացած ավել օգտագործվող 26,26(քսանվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը իրենց օտարելու խնդրանքով : Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով, 72 հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից տրամադրված ճշգրտված չափագրությունը, հաշվի առնելով Արտաշես Ռուբենի Սարգսյանի և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանի լիազորված անձ Արթուր Ստեփանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հոկտեմբերի 12-ին № 18385 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանին և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Թամանյան փողոց N 26 հասցեի շինության հողամասում թվաբանական սխալի պատճառով առաջացած 26,26(քսանվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը օտարել ուղղակի վաճառքի միջոցով :
2. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514(տաս հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 քառակուսի մետր քառակուսի մետրի դիմաց, ընդհամենը՝ 276097 (երկու հարյուր յոթանասունվեց հազար իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանի և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայց հարուցել:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ավագանին Լիազորում է՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանամկան բաժնի պետ՝ Հրաչիկ Շիրակի Վարդանյանին (Հաշվառման հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Անի համայնք, գ. Իսահակյան, փողոց 6, տուն 3, նույնականացման քարտ՝ 012290003 տրված 05.04.2021թվականին՝ 064-ի կողմից, վավեր է մինչև 05.04.2031 թվականը) Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանում, Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ վարչական դատարանում, Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի վարչական պալատում հանդես գա, որպես Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու լիազորված ներկայացուցիչ, կատարի բոլոր այն գործողությունները որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածով և կապված են սույն հանձնարարագրի հետ:
3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով կատարել պետական տուրքի վճարումներ՝ հայցադիմում ներկայացնելու և անհրաժեշտ դատավարական գործողություններ կատարելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նիստը վարողը տեղեկացեց, որ բարձրացված հարցով Շիրակի մարզի դատախազությունն է պարզրասր դատական հայց ներկայացնելու և ավագանու անդամները միաձայն որոշեցին ձեռնպահ քվեարկել նախագծին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -0 Դեմ -0 Ձեռնպահ -24

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱՋԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն չընդունվեց

ԼՍԵՑԻՆ

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 15-ի N 96-Լ որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 134-135-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական չորրորդ նստաշրջանի երրորդ նիստի գումարման օր սահմանել 2026 թվականի նոյեմբերի 17-ը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -24 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱՋԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Լ. ՏԻՐԱՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 193-Ա)*

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՆԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ԼԱԼԱԶԱՐՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ԷԼԲԱԿՅԱՆ

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԵԼԻՔՅԱՆ

ԽՈՍՐՈՎ ՄԵԼԻՔՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՇԱՎԱՐՇ ԱՐԱՄՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԷԴԳԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԳԱԼՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԵԳԶԱԴՅԱՆ

ՎԱՀԱՆ ԴԱՎԹՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՆԺԵԼԱ Մ.ՄԱԹՈՍՅԱՆ

ԼԵՎՈՆ ԱՆԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԱԴԱՄՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼԻԶԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԵԴԻԳԱՐՅԱՆ

ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԼԵՎՈՆ ՏԻՐԱՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՄՈՍՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Նիստն արձանագրեց՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱԼԽԱՍՅԱՆԸ

2026թ. հոկտեմբերի 14
ք. Գյումրի